ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի «ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՐԱՏՆԵՐԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՐԱՏՆԵՐԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՎԸ, ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՐԱՏՆԵՐԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 1184-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 685-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ N 1-Ի 15 ԵՎ 16-ՐԴ ԿԵՏԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1796 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սահմանադրական դատարանը դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի «Դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկը, դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին տրամադրվող տեղեկանքի ձևը, դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին տեղեկանք տրամադրելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի N 1184-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 685-Ն որոշման Հավելված N 1-ի 15 և 16-րդ կետերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը և 2025 թվականի սեպտեմբերի 16-ին ընդունեց ՍԴՈ-1796 որոշումը:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2025 թվականի սեպտեմբերի 16-ի ՍԴՈ-1796 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ա. Վաղարշյանս շարադրում եմ իմ հատուկ կարծիքը՝ որոշման եզրափակիչ մասի և դրանց հիմքում դրված պատճառաբանությունների վերաբերյալ:

1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Գործի քննության առիթը Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2024 թվականի սեպտեմբերի 27-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանի 2025 թվականի մարտի 11-ի ՍԴԱՈ-34 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը կասեցվել է: Սահմանադրական դատարանի 2025 թվականի ապրիլի 29-ի ՍԴԱՈ-70 աշխատակարգային որոշմամբ գործով զեկուցողը փոխվել է. Սահմանադրական դատարանի դատավոր Վ. Գրիգորյանի փոխարեն զեկուցող է նշանակվել Սահմանադրական դատարանի դատավոր Ս. Սաֆարյանը: Սահմանադրական դատարանի 2025 թվականի հուլիսի 3-ի ՍԴԱՈ-106 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է:

2. ՎԻՃԱՐԿՎՈՂ ԻՐԱՎԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

«Դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկը, դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին տրամադրվող տեղեկանքի ձևը, դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին տեղեկանք տրամադրելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի N 1184-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 685-Ն որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում) Կառավարությունն ընդունել է 2019 թվականի մայիսի 30-ին, վարչապետը ստորագրել է 2019 թվականի հունիսի 5-ին և ուժի մեջ է մտել 2019 թվականի հունիսի 13-ին:

Որոշման N 1 հավելվածով սահմանված «Դատավորի պաշտոնում նշանակմանը, նշանակվելուց հետո պաշտոնավարմանը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների» ցանկի 15-րդ կետում սահմանված է՝ «Երկու ականջի կայուն լրիվ խլություն կամ խուլհամրություն (H91)», իսկ 16-րդ կետում՝ «Երկու աչքերի (բինոկուլյար) կուրություն (H54.0)»:

3. ԴԻՄՈՂԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

3.1. Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ նաև՝ Դիմող), անդրադառնալով դատավորի առողջական վիճակին առաջադրվող նախապայմանների սահմանմանը, կարծում է, որ ինչպես դատավորի ընդհանուր առողջական վիճակը, այդպես էլ վերջինիս գործունեության իրականացմանը խոչընդոտող հիվանդությունների առկայությունը կարող են իրավաչափ պայման հանդիսանալ՝ դատավորի պաշտոնի զբաղեցման և/կամ լիազորությունների դադարեցման համար:

Դրանով հանդերձ՝ Դիմողը գտնում է. *«(...) պետությունը, Սահմանադրությամբ ամրագրելով հանրային ծառայության անցնելու իրավունքն ու խտրականության արգելքը՝ որպես սկզբունք, իր առջև դրել է պարտականություն՝ ապահովելու յուրաքանչյուր քաղաքացու, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, այլ քաղաքացիների հետ հավասար հիմունքներով հանրային ծառայության անցնելու համար հնարավորությունների ապահովումը, ինչն էլ իր հերթին միջազգային իրավական փաստաթղթերով նախատեսված պարտավորությունների համատեքստում ևս ենթադրում է արժանիքների հիման վրա սեփական մասնագիտական ու այլ ընդունակություններն ազատ դրսևորելու նպատակով համապատասխան քաղաքականության, օրենսդրական և այլ կառուցակարգերի, այդ թվում՝ խելամիտ հարմարեցումների ապահովում»*:

Դիմողը, ամփոփելով իր հիմնավորումները, խնդրում է Հայաստանի Հանրապետության Կառավարության թիվ 685-Ն որոշման Հավելված N 1-ի 15 և 16-րդ կետերը ճանաչել Սահմանադրության 29, 49 և 81-րդ հոդվածներին հակասող այնքանով, որքանով վիճարկվող դրույթներով սահմանվում է բացարձակ արգելք՝ երկու ականջի կայուն լրիվ խլություն կամ խուլհամրություն, երկու աչքերի (բինօկուլյար) կուրություն ունեցող անձանց՝ դատավորի պաշտոնում նշանակվելու համար:

3.2. Կառավարությունը (այսուհետ նաև՝ Պատասխանող) նշում է՝ վերլուծելով խնդրո առարկա հարցի առնչությամբ միջազգային իրավական չափանիշները՝ Դիմողը հաշվի չի առել այն հանգամանքը, որ *«(...) թեև հաշմանդամության իրավունքների շուրջ քննարկումների մեծ մասը կենտրոնացած է ներառման, արդարադատության մատչելիության և ողջամիտ հարմարեցումների անհրաժեշտության վրա, առկա չէ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առանձին որոշում կամ դիրքորոշում որևէ միջ-*

ազգային մարմնի կողմից, որն ուղղակիորեն վերաբերում է հենց երկու ականջի կայուն լրիվ խլություն, երկու աչքերի (բինօկուլյար) կուրություն ունեցող անձանց դատավոր նշանակելու իրավաչափության կամ անհրաժեշտության վերաբերյալ: Միջազգային կառույցները, ինչպիսին է օրինակ Միացյալ ազգերի կազմակերպության Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն, թեև ընդգծում են մասնակցության և ներառականության կարևորությունը կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ հանրային ծառայության պաշտոններում, այնուամենայնիվ նաև ընդունում են, որ անձինք պետք է հնարավորություն ունենան կատարելու իրենց վերապահված դերերից բխող հիմնական գործառույթները: Այլ կերպ, թեև կարևորություն է տրվում ներառականության սկզբունքին, նման հաշմանդամություն ունեցող անձին դատավորի պաշտոնում նշանակելու իրագործելիությունն առավելապես կախված պետք է լինի այդ պաշտոնից բխող գործառույթներն արդյունավետ կատարելու նրա կարողությունից»:

Պատասխանողը գտնում է նաև, որ երկու ականջի կայուն լրիվ խլություն, երկու աչքերի (բինօկուլյար) կուրություն ունեցող անձանց կողմից դատավորի պաշտոնում նշանակվելը կարող է բերել այլ անձանց արդար դատաքննության իրավունքի խախտման, որը, իր հերթին, կարող է առաջացնել նաև կողմերի իրավահավասարության խաթարում, ինչպես նաև դատական համակարգի նկատմամբ հասարակական վստահության կորուստ:

Պատասխանողի կարծիքով՝ «*Դատավորի աշխատանքը պահանջում է մի շարք հմտություններ, այդ թվում՝ վկայություններ լսելը, փաստերի վերլուծությունը և կողմերի միջև երկխոսություն հաստատելը: Քննարկվող հիվանդությունների առկայությունը դատավորի մոտ կարող է խոչընդոտել այս գործընթացին, որը կարող է հանգեցնել դատական քննության, արդարադատության իրականացման որակի անկման: Նշված պայմաններում դատավորի կողմից գործի քննության իրականացումը կարող է առաջացնել նաև երկխոսության բարդություններ, վերջինս չի կարողանա լիարժեք լսել կողմերի դիրքորոշումները, փաստերի ներկայացումը, վկաների վկայությունները, որը խնդրահարույց է փաստերի ճիշտ ընկալման, մեկնաբանության, ներքին համոզմունք ձևավորելու տեսանկյունից, ինչն էլ իր հերթին շատ հաճախ կարող է հանգեցնել արդարադատության ոչ պատշաճ իրականացման: Նշվածը նաև խնդրահարույց է դատավարության մասնակիցների կողմից*

փոխանցվող տեղեկատվության ընկալման տեսանկյունից, քանի որ դատական նիստերի ընթացքում հայցի կամ առարկությունների հիմքում դրվող փաստերը դատավորի կողմից պետք է լիովին ընկալվեն: Երկու աչքերի կուրությունը կարող է օրինակ խոչընդոտել դատավորի կողմից փաստերը հավաստող փաստաթղթերի, ապացույցների ինքնուրույն վերլուծությանը, ինչը կարող է հանգեցնել ներքին համոզմունքի սխալ ձևավորման, գործի փաստերից չբխող վճիռների, դատավճիռների, որոշումների կայացման: Քննարկվող հիվանդությունները կարող են նպաստել նաև ուշացած որոշումների կայացման, դատավարական ժամկետների չպահպանման: Այսինքն, դատական ընթացակարգի արդյունավետությունը կարող է խաթարվել»:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ Պատասխանողը գտնում է, որ «(...) Հավելվածի 15 և 16-րդ կետերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը»:

4. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4.1. Հանրային ծառայության ընդհանուր և հատուկ իրավակարգավորումների հարաբերակցության մասին

Սահմանադրական դատարանը, ՍԴՈ-1796 որոշման 17-28-րդ կետերում վերլուծելով հանրային ծառայության ինստիտուտը, հանգում է երկու եզրակացության՝

1) հանրային ծառայությունը՝ որպես միասնական համակարգ, և այդ համակարգում գործող ծառայությունները՝ որպես առանձին ենթահամակարգեր, ունեն, համապատասխանաբար, ընդհանուր և հատուկ նպատակներ ու խնդիրներ և վերջիններիս իրացման համար նախատեսված իրավակառուցակարգային համարժեք համալիր: Համապատասխանաբար՝ հանրային ծառայությունը ենթարկվում է ընդհանուր և հատուկ իրավակարգավորման, վերջինիս գոյությունը պայմանավորված է հանրային ծառայության տվյալ տեսակի առջև դրված նպատակներով ու խնդիրներով,

2) Սահմանադրության 49-րդ հոդվածով օրենսդրին վերապահված ընդարձակ հայեցողության վերապահման նպատակը հանրային ծառայության պաշտոններում գործառույթների բազմազանության պայմանում այդ պաշտոններից յուրաքանչյուրի առանձնա-

հատկություններին հանրային ծառայության անցնելու կառուցակարգերի համապատասխանությունն ապահովելն է:

Այս եզրակացություններից ՍԴՈ-1796 որոշմամբ բխեցվում են երկու իրարամերժ դիրքորոշումներ.

առաջին՝ «(...) հանրային ծառայության անցնելու ընդհանուր պահանջ-չափանիշներից զատ, հանրային ծառայության առանձին տեսակներում ծառայության անցնելու հավակնորդների համար օրենքով կարող են սահմանվել հատուկ պահանջներ: Վերջիններս հանրային ծառայության անցնելու ընդհանուր պահանջների նկատմամբ հանդես են գալիս որպես հատուկ նորմեր (lex specialis)»,

երկրորդ՝ «(...) քանի որ հանրային ծառայությունը սահմանադրական ինստիտուտ է, հանրային ծառայության անցնելու ընդհանուր պահանջներն ունեն հանրային ծառայության անցնելու իրավունքը կանոնակարգող սկզբունքի կարգավիճակ և անկախ ծառայության տեսակից պարտադիր են կատարման համար: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր հանրային ծառայողի նկատմամբ կիրառելի են իր ծառայությանը վերաբերելի և՛ ընդհանուր, և՛ հատուկ պահանջները»:

Այս դիրքորոշումներում առկա են տրամաբանական և մեթոդաբանական հակասություններ: Միևնույն հարաբերության նկատմամբ չի կարող գործել ընդհանուր կարգավորումը, եթե կա հատուկը: Վերջինիս առկայության դեպքում՝ ընդհանուրը դուրս է մղվում: Հետևաբար՝ ամբողջովին «և՛, և՛» կիրառումը բացառվում է, կիրառումը կարող է լինել «կա՛մ այս, կա՛մ այն»:

Եզրակացություն. եթե դատական ծառայությունը հանրային ծառայության ենթահամակարգ է, ապա հանրային ծառայության իրավակարգավորումները, այդ թվում նաև՝ հավակնորդին ներկայացվող պահանջների մասով, կարող են գործել դատական ոլորտում, եթե հատուկ իրավակարգավորումներն այլ բան չեն սահմանում:

4.2. Քննարկվող իրավական արգելքների սահմանադրական հիմքերը

Քննարկվող դեպքում հատուկ իրավակարգավորումն արգելում է երկու ականջի կայուն լրիվ խլություն կամ խուլհամրություն կամ երկու աչքերի (բինօկուլյար) կուրություն ունեցող անձանց՝ դատավորի պաշտոնում նշանակվելը: Արգելքի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ «(...) դատական իշխանության պարագայում վերջինիս սահմանա-

դրական գործառույթներն ու դրանցից բխող լիազորությունները պահանջում են մասնագիտական հատուկ գիտելիքներ, բարձր իրավագիտակցություն և **հոգեֆիզիոլոգիական կարողունակություն**, որոնք թույլ կտան իրավական և փաստական լուծում գտնել ամենատարբեր գործերի և իրավական վեճերի համար՝ հաղթահարելով այլևայլ արտաքին ազդեցություններ, կանխելով գործի քննության ընթացքում դատավարության մասնակիցների ոչ իրավաչափ վարքագիծը և, ընդհանուր առմամբ, բավարարելով արդար դատաքննության հանդեպ հանրության մոտ ձևավորված իրավաչափ ակնկալիքը» (տե՛ս ՍԴՈ-1796, 53-րդ կետ):

Այս մոտեցումը հիմք ընդունելով՝ այդուհանդերձ, Սահմանադրական դատարանը որոշման եզրափակիչ մասում Սահմանադրության 49 և 75-րդ հոդվածին հակասող և անվավեր է ճանաչել ՀՀ Կառավարության թիվ 685-Ն որոշման Հավելված N 1-ի 15 և 16-րդ կետերն այնքանով, որքանով դրանցով սահմանվում է երկու ականջի կայուն լրիվ խլությամբ կամ խուլհամրությամբ ու երկու աչքերի (բինոկուլյար) կուրությամբ տառապող անձանց համար դատավորի պաշտոնում նշանակվելու բացարձակ արգելք:

Ինչքանո՞վ է սահմանադրորեն ճիշտ նման եզրակացությունը: Այս հարցին պատասխանելու համար փորձենք վեր հանել խնդրո առարկա իրավակարգավորումը պայմանավորող սահմանադրական հիմքերը:

Դատական իշխանությունն իշխանությունների բաժանման սահմանադրական սկզբունքի հիմքով գործող պետության հատուկ՝ անկախ, ինքնուրույն և լիիշխան մարմիններին՝ դատարաններին, Սահմանադրությամբ վերապահված ու օրենքներով կարգավորվող բացառիկ իրավազորությունն է, որի հիմնական, բացառիկ գործառույթներն են՝ հատուկ դատավարական ձևերով (կարգերով) հասարակական բախումների (վեճերի) քննությունն ու լուծումը, այսինքն՝ արդարադատության իրականացումը, ինչպես նաև՝ քաղաքացիական ոլորտում իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի ու կացությունների հաստատումը, սահմանադրական վերահսկողությունը, վերահսկողությունը քրեական վարույթում: Հատուկ գործառույթների իրականացումն անհրաժեշտորեն պահանջում է, որ դատական իշխանության համակարգը լինի անկախ և ինքնուրույն, որը միջոց է դրա անաչառության ու անկողմնակալության, արդարացիության երաշխավորման համար: Հետևաբար՝ **անկախությունը՝ որպես անաչառության ու արդարացիության**

երաշխիք, դատական իշխանության համակարգի հիմնական սահմանադրական հատկանիշն է, դրա կազմակերպման ու գործունեության հիմնարար սկզբունքը, այսպես ասած՝ «սկզբունքների սկզբունքը», որի համար մնացած բոլոր իրավակարգավորումներն ունեն ապահովող, երաշխավորող նշանակություն:

Անկախությունը սուբյեկտին վերագրվող հատկություն է՝ լինել ազատ, ինքնուրույն, գործել և որոշումներ ընդունել՝ առանց որևէ մեկի միջամտության, զերծ մնալ որևէ ազդեցությունից, ինչից էլ որ այն բխի: Դատական իշխանության համակարգում գոյություն ունեն «անկախություն» հասկացության բազմաթիվ առումներ[1]:

Դատավորը, որին պատվիրված է լինել անկախ ու ենթարկվել միայն օրենքին, առաջին հերթին մարդ է՝ մարդուն բնութագրող բոլոր հատկություններով: Այս հարթությունում նրա անկախությունը պայմանավորված է ոչ միայն արտաքին իրավական, կրթական, մշակութային և նման բնույթի այլ ու, շատ դեպքերում, ձեռքբերովի երաշխիքներով, այլև ֆիզիոլոգիական, հոգևոր ու հոգեբանական որակներով:

Դատավոր դառնալու հավակնություն ունեցող անհատի որակների կարևորությունը նկատի ունենալով՝ արդի դատարանակազմական օրենսդրությունը կարգավորել է դատավորի թեկնածուի ընտրության փուլում թեկնածուի ֆիզիկական արատների ու հիվանդությունների առկայության, հոգեբանական առանձնահատկությունների ստուգման մի շարք չափանիշներ ու ընթացակարգեր: Հավակնորդը ներկայացնում է դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին սահմանված կարգով տրված փաստաթուղթ, իսկ ՀՀ Կառավարության 2019

---

[1] Դատական իշխանության համակարգում «անկախություն» հասկացության առումներից են, օրինակ՝ 1) դատական իշխանության անկախությունը պետական (հանրային) այլ իշխանություններից ու դրանց մարմիններից, 2) դատական համակարգում, ըստ իրավասության դատարանների տեսակների ու դատական ատյանների, հորիզոնական և ուղղահայաց անկախությունը միմյանցից, 3) ներպետական դատարանի ու դատավորի անկախությունը միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների, ներառյալ՝ դատարանների ոչ իրավաչափ միջամտությունից, 4) անկախությունը դատարանի՝ որպես պետական մարմնի, ներկառուցվածքային փոխհարաբերություններում (դատական կազմի արտաքին և ներկազմային, դատարանի նախագահի և դատավորների, ինչպես նաև դատարանի օժանդակ ստորաբաժանումների և դատավորի), 5) դատավորի՝ որպես պաշտոնատար անձի ներհամակարգային (դատական վարույթներում ու ընթացակարգերում) անկախությունը, 6) դատավորի՝ որպես պաշտոնատար անձի արտահամակարգային անկախությունը, 7) անկախությունը հակասահմանադրական, ոչ իրավական օրենքից, 8) և այլն: Բացի անկախության թվարկված, ընդ որում՝ ոչ սպառիչ դրսևորումներից, դատավորի անկախության համար յուրահատուկ երաշխիքների նշանակություն ունեն դատավորի պատշաճ մասնագիտական նկարագիրն ու արհեստավարժությունը: Միևնույն ժամանակ, կայացած քաղաքացիական հասարակությունը և դրա ենթահամակարգերը դատավորի անկախության էական պայմաններ ու գործոններ են:

թվականի մայիսի 30-ի թիվ 685-Ն որոշմամբ հաստատված է դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկը: Դա նշանակում է, որ **դատավորի՝ որպես մարդ-անհատի ֆիզիոլոգիական վիճակը, բնական ու ձեռքբերովի հոգեբանական հատկությունները ևս նախադրյալ են նրա՝ մասնագիտական գործունեության մեջ անկախության ու անաչառության համար[2]:**

Դատական իշխանության ոլորտում անկախության ու անաչառության սահմանադրական պահանջի կենսագործման երաշխիքներից է դատական վարույթների կառուցումն անմիջականության սկզբունքի հիման վրա: Այս համատեքստում Որոշմամբ սահմանված արգելքները՝ որպես ֆիզիոլոգիական վիճակներ, հակասում են հենց անմիջականության սկզբունքին, ինչի դրսևորումները՝ սույն գործով, բավականին մանրամասն թվարկել է Պատասխանողը: Հետևաբար՝ հակասահմանադրական վիճակ են ստեղծում ոչ թե նշված արգելքները, այլ ընդհակառակը՝ այդ արգելքների առկայությունը Սահմանադրությանը հակասող ու հետևաբար՝ անվավեր ճանաչելը, քանի որ դա հակասում է դատական իշխանության կազմակերպման ու գործունեության մի շարք հիմնարար, ընդ որում՝ Սահմանադրությամբ ամրագրված, սկզբունքներին, խաթարում է դատական իշխանության սահմանադրական առաքելությունը:

---

[2] Դատավոր դառնալու հավակնություն ունեցող անհատի որակների կարևորությունը նկատի ունենալով՝ օրենսդրությունը կարգավորել է դատավորի թեկնածուի ընտրության փուլում թեկնածուի ֆիզիոլոգիական ու հոգեբանական առանձնահատկությունների ստուգման մի շարք չափանիշներ ու ընթացակարգեր: **Առաջին՝** հավակնորդը ներկայացնում է դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին սահմանված կարգով տրված փաստաթուղթ, իսկ ՀՀ Կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի թիվ 685-Ն որոշմամբ հաստատված՝ դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկում ներառված են նաև մի շարք հոգեկան և վարքային խանգարումներ, որոնց առկայությունը բացառում է դատավոր դառնալու հնարավորությունը: **Երկրորդ՝** մասնագիտական որակավորման քննությունից զատ՝ հավակնորդներն անցնում են հոգեբանական ստուգում՝ ուղղված պատասխանատվության զգացման, ունկնդրելու կարողության, ինքնատիրապետման, հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառման և դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշների ստուգմանը: Բացի թեստավորումից, որպես կանոն, դատավորների թեկնածուների հավակնորդներն անցնում են հարցազրույցի գործընթացով, որը, բացի մի շարք կրթական արժանիքների վերհանումից, նպատակ ունի պարզելու և գնահատելու նաև նրա անձնական-հոգեբանական հատկանիշները (մասնավորապես՝ ինքնատիրապետում, վարվեցողություն, ազդեցության չափավոր կիրառում, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, արդարամտություն, վերլուծական կարողություններ և այլն): Վերը թվարկված որակները հիմնականում հոգեբանական են, իսկ մարդու հոգեբանական հատկություններն ամբողջովին ձեռքբերովի կամ մշակովի չեն: Դրանց մի մասը, օրինակ, աֆեկտիվությունը և ինքնատիրապետման հետ կապված խնդիրները, համաձայնողականությունը և այլն, բնական ու բնածին են, որոնք կրթության ու դաստիարակության միջոցով հնարավոր է որոշակիորեն շտկել, բայց ոչ՝ վերացնել:

4.3. Համաչափության թեստի կիրառումը և դրա արդյունքների հակասությունը ՍԴՈ-1796 որոշման եզրափակիչ մասին

ՍԴՈ-1796 որոշման 40-57-րդ կետերում, հիմք ընդունելով Սահմանադրության 78-րդ հոդվածը, կիրառվել է հիմնական իրավունքի սահմանափակման համաչափության թեստը: Նշյալ բոլոր կետերի մանրազնին ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ քննարկման առարկա և Կառավարության որոշմամբ սահմանված այլ արգելքները, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների համաձայն, հետապնդում են սահմանադրաչափ նպատակներ: Որոշման մեջ արձանագրված այս բովանդակությամբ մտահանգումները հակասում են Սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասին:

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Խնդրո առարկա գործով վարույթը ենթակա էր կարճման՝ ելնելով դիմումի հիմնավորումներից՝ հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները՝ ներքոշարադրյալ պատճառաբանություններով.

վերացական սահմանադրական վերահսկողության սուբյեկտը, բարձրացվող սահմանադրաիրավական վեճի առարկան և շրջանակը մատնանշելով, պետք է հստակ հիմնավորի վիճարկվող նորմերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին ուղղակիորեն հակասելու պատճառահետևանքային կապը՝ դիմումի շրջանակներում ներկայացնելով վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականությունը փաստող բազմաբովանդակ պատճառաբանություններ՝ զերծ մնալով միակողմանի դիրքորոշումներ և դատողություններ վկայակոչելուց: Ելնելով իրենց սահմանադրաիրավական կարգավիճակից՝ հիշատակված սուբյեկտները պետք է ցուցաբերեն առավել բարձր մակարդակի փութաջանություն և, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վիճարկելով այս կամ այն իրավական ակտի կամ դրա դրույթի/դրույթների սահմանադրականությունը, պատշաճ կերպով հիմնավորեն վիճարկվող դրույթի և Սահմանադրությամբ պահպանվող արժեքի/իրավունքի հնարավոր խախտման միջև պատճառահետևանքային կապը: Վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ Դիմողի կողմից ներկայացված

փաստարկները վկայում են, որ դրանց վերաբերյալ Դիմողի եզրահանգումները հիմնավոր պատճառաբանված չեն և չեն կարող Դիմողի կողմից բարձրացված հարցին սահմանադրաիրավական վեճի բովանդակություն հաղորդել:

Վերոգրյալի լույսի ներքո կարծում եմ, որ Դիմողը չի ներկայացրել վիճարկվող դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ հիմնավոր փաստարկներ, իսկ նրա մտահոգություններն ու վիճարկվող կարգավորումների հետ անհամաձայնություններն ինքնին չեն կարող դիտվել իբրև վիճարկվող դրույթների հակասահմանադրականության հիմնավորումներ: Հետևաբար՝ Դիմողը չի հաղթահարել Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա հիմնավորված դիմում ներկայացնելու օրենսդրական նախապայմանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ **Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆ**

25 սեպտեմբերի 2025 թվականի